

Տեղեկատվություն

«Դիլիջան» ԱՊ » ՊՈԱԿ-ի 2016թ-ի հուլիս ամսին կատարված աշխատանքները

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 2016թ-ի Աշխատանքային պլան-ծրագրով նախատեսված աշխատանքներից Հուլիս ամսում կազմակերպության բաժիններում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Պահպանության բաժնի աշխատակիցների կողմից <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում Հուլիս ամսին հայտնաբերվել է ապօրինի հատված 11 ծառ, որոնց համար կազմվել է 4 անտառխախտման արձանագրություն և 1 անտառխախտման արձանագրություն 1,8 խ.մ ապօրինի դուրս բերված վառելիքայտի համար, որոնք ուղարկվել են Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին: Հուլիս ամսին իրականացվել են <<Հաղարծին տեղամաս>> մասնաճյուղի թիվ 2 պահաբաժնում՝ 1,0 հա, թիվ 3 պահաբաժնում՝ 1,0 հա, թիվ 4 պահաբաժնում՝ 1,0 հա, թիվ 11 պահաբաժնում՝ 3,0 հա, թիվ 14 պահաբաժնում՝ 1,0 հա բնաշիվային եղանակով անտառի վերականգնման, աջակցման աշխատանքներ: <<Դիլիջան տեղամաս>> մասնաճյուղի թիվ 7 պահաբաժնում կատարվել է 1 հահակահրդեհային նշանակության ճանապարհների կառուցում, <<Հաղարծին տեղամաս>> մասնաճյուղի թիվ 7 պահաբաժնում՝ 1 հահակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում, <<Շամախյան տեղամաս>> մասնաճյուղի թիվ 10 պահաբաժնում՝ 1 հահակահրդեհային նշանակության ճանապարհների կառուցում, թիվ 1 պահաբաժնում՝ 1 հահակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում և թիվ 2 պահաբաժնում՝ 1 հահակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում, իսկ <<Գոշ տեղամաս>> մասնաճյուղի թիվ 5 պահաբաժնում՝ 1,0 կմ հահակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում, թիվ 7 պահաբաժնում՝ 1 հատ հակահրդեհային նշանակության ջրավազանների վերանորոգում:

Գիտական բաժնի աշխատակիցների կողմից Հուլիս ամսին կատարվել է <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում վայրի անտառկատվի գլխաքանակի

մոտավոր հաշվառում, ուսումնասիրություն և քարտադարանի կազմում , տարբեր բուսատեսակների հավաքման և չորացման աշխատանքներ :

Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի աշխատակցի կողմից Հուլիս ամսին կատարվել են տարածքների աղբահանության աշխատանքներ, Էկոերթուղիների և հանգստի գոտիների գրավչության պահպանման աշխատանքներ:

<<Դիլիջան>> ազգային պարկ>> պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար կնքվել են համակարգչային սարքավորումների ձեռքբերման, հանգստի տարածքների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման պայմանագրերը: